

Բագմակողմանի զարգացած միտքի տէր էր Պ. Պետերսը: Ոչ միայն քաջածանօթ էր քրիստոնեաց արեւելքի պատմութեան եւ գրականութեան, այլ եւ միջամուխ փելիսոփայական, աստուածաբանական, ընկերբանական եւ գաղափարական հարցերու: Իր գրական գործունէութեան մէջը կը հակէր առաւելապէս սրբախօսական-պատմական գրականութեան, ինչպէս կը պահանջէր իր կոչումը: Ան երեւան կը բերէր իր գրուածքներու մէջ անհուն ծանօթութիւն ազբըններու եւ անոնց հայոց գրականութեան. եւ ունէր արթնութիւնը շահագործելու զայն: Սորաթափանց էր իր տեսութիւնը պատմական հարցերու մէջ. կը սիրէր կրկնել մանրաքնին ամէն հարց: Իր անաչառութիւնը յարգուած էր ամէնէն: Իսկ իր գիտնականութիւնը բարձր գնահատուած ընդհանուրէն:

1935ին Բելգիայի, 1942ին Հոմմի քահանայապետական Հնախօսութեան, 1945ին Ֆրանսայի Գեղեցիկ Դպրութեանց Ակադեմիաները զինքը իրենց անդամ գրեցին: Իսկ 1946ին Շտրասբուրգի Համալսարանը ընդհանց իրեն պատուոյ տիտղոսն Դոկտոր աստուածաբանութեան եւ 1947ին Լուվէնի Համալսարանը՝ Դոկտոր բանասիրութեան եւ արեւելեան պատմութեան: 1950 ապրիլ 25ին տօնեցին իր յարգողները իր Ծննդեան 80ամեակը ձօնելով իրեն երկու շաբաթ հատորներու մէջ ծաղկեփունջ մը գանազան յօդուածներու, գրուած Յորելիարին նախասիրած ձեւերու մասին:

Հանդուցեալը հեղինակած է բազմաթիւ գրուածքներ, մաս մը լոյս տեսած առանձին հատորներով, ուրիշներ հրատարակուած իրրեւ յօդուածներ գանազան ուսումնաթերթերու մէջ. ընդ ամէնը թուով 160: P. Peetersի գրուածքներու ցանկը կազմած է Paul Devos կից Հանդուցեալին Կենսագրականին, հրատարակուած Analecta Bollandiana, 1951, էջ Ա.—ԾԹ, յատկապէս ԽԸ.—ԾԹ (Bibliographie du P. Paul Peeters):

Այս տեղ պիտի ներկայացնեմ այն գրութիւնները միայն, որոնք կը հային հայալիտութեան: Նկատի չեմ առած այնպիսիները, որ հարեւանցի կերպով շօշափուած է որ եւ է վկայութիւն մը կամ տեղիք մը հայ Մասնադրութեան: Նոյնպէս չեմ յիշած գրախօսականները նուիրուած հայերէն կամ հայալիտութեան հայոց գրուածքներու: Հանդու-

ցեալը մասնակցած է Բողանդեանց հրատարակած Acta Sanctorum հաւաքման երեք վերջին հատորներու: Ասոնց մէջ Հայոց հայոց հատուածները առած եմ ցանկիս մէջ:

De SS. Rhipsime et sociis virginibus martyriis in Armenia. Propylaeum ad Acta Sanctorum Decembris. Bruxellis 1940, p. 424—425.
 De S. Gregorio ep. Magnae Armeniae. Propylaeum... p. 426—427.
 S. Grégoire l'Illuminateur dans le calendrier lapidaire de Naples. An. Boll. 60 (1942), 91—130.
 La Passion arabe de S. 'Abd-al-Masih. An. Boll. 44 (1926), 270—341.
 Une Passion arménienne des SS. Abdas, Hormisdas, Šahin (Surènes) et Benjamin. Ann. Boll. 28 (1909), 399—415.
 La vision de Denys l'Aréopagite à Héliopolis. An. Boll. 29 (1910), 302—322.
 La version géorgienne de l'autobiographie de Denys l'Aréopagite. Անդ, 31 (1912), 5—10.
 La version ibéro-arménienne de l'autobiographie de Denys d'Aréopagite. Անդ, 39 (1921), 277—313.
 Une Passion arménienne de S. Georges. An. Boll. 28 (1909), 249—271.
 La légende de S. Jacques de Nis'be. An. Boll. 38 (1920), 285—373.
 De S. Isbozeta martyrio in Perside. Acta Sanctorum Novembris, t. IV (1925), 191—216. Ս. Յիզատիրուցիս (Աստուածատուր) վկային վկայարանութիւնը, հրատարակութեամբ հայ ընդարձակ եւ համառօտ ընդգրկներու:
 Une sainte arménienne oubliée. Sainte Marie la Jeune († 902—903). Հանդէս Ամսօրեայ 61 (1927), 723—730.
 La Passion arménienne de S. Phocas. An. Boll. 30 (1911), 290—295.
 La Passion arménienne de S. Serge le Stratélate. Յուշարձան, Վիեննա 1911, էջ 186—192:
 Un Miracle des SS. Serge et Théodore et la Vie de S. Basile, dans Fauste de Byzance. An. Boll. 39 (1921), 50—64.
 Sainte Soušanik, martyre en Arméno-Géorgie († 13/14 décembre 482/484). An. Boll. 53 (1935), 5—48, 245—307.
 Le début de la persécution de Sapor d'après Fauste de Byzance. Revue des études arméniennes. 1 (Paris 1920—1921), 15—33.
 Les débuts du christianisme en Géorgie d'après les sources hagiographiques. An. Boll. 5 (1932), 5—58. Հմմտ. նաեւ Académie royale de Belgique. Bulletin de la Classe des Lettres. 18 (1932), 25—27.
 Recherches d'histoire, de philologie et d'hagiographie orientales. 1951.

Bibliotheca hagiographica orientalis. Bruxelles 1910, 8°, XXIII—288 pp. [Subsidia hagiographica, no. 10].
 Pour l'histoire du synaxaire arménien. An. Boll. 30 (1911), 5—26.
 Traductions et traducteurs dans l'hagiographie orientale à l'époque byzantine. An. Boll. 40 (1922), 241—298. Նոյնն ընդարձակուած՝ Orient et Byzance. Le tréfonds oriental de l'hagiographie byzantine. Bruxelles 1950, 8°, 236 pp. [Subsidia hagiographica, no. 26].
 Evangiles apocryphes. II. L'Évangile de l'Enfance. Rédactions syriaques, arabe et arméniennes traduites et annotées. Paris 1914, LX—330 pp.
 Intervention politique de Constance II. dans la Grande Arménie en 338. Académie royale de Belgique. Bulletin de la Classe des Lettres, 17 (1931), 10—47.
 Pour l'histoire de l'alphabet arménien. Revue des études arméniennes, 9 (1929), 203—237.
 A propos de la version arménienne de l'historien Socrate. Annuaire de l'Institut de philologie et d'histoire orientales, 2 (= Mélanges Bidez, Bruxelles, 1934), 647—675.
 Un colophon géorgien de Thornik le Moine. An. Bull. 50 (1933), 5—33.
 Un témoignage autographe sur le siège d'Antioche par les Croisés en 1098. Miscellanea historica in honorem Alberti De Meyer, t. I (Louvain 1946), p. 373—390.
 Πασαγάδης — Περοσγενής. Byzantion 8 (1933), 405—423.
 Quelques noms géographiques arméniens dans Skylitzès. Byzantion 6 (1931), 435—440.

Հ. Ն. ԱԿԵՆՅԱՆ

H. PASDERMADJIAN, Histoire de l'Arménie depuis les origines jusqu'au traité de Lausanne. Paris 1949, 8°, 484 pp.

Նորութիւն մը կու տայ մեզի Հ. Փաստըրմաջեան. «Հայոց պատմութիւն» մը, որ իր յօրինուածքովն ու կեցուածքովը կը շեղի բոլոր նախորդներէն: Ան կանգնած Հայաստան լոր նախորդակին վրայ կը գիտէ սահմանէն ներսն ու գուրը տեղի ունեցած եռուզեւեց, քաղաքական, ընկերային, մշակութային: Իր տեսութեան շրջագծին մէջ է Ռւբարտեանց զարէն մինչեւ մեր օրերը (1920, Ռւբարտեանց զարէն մինչեւ մեր օրերը կեկտ. 2) միջոցը: Կը հետեւի պատմութեան

ժամանակագրական զարգացման. կը նկատարէ հանգուցէ հանգոյց անոր բովանդակութիւնը: Չի ճանչնար բաժանումներ ըստ հարստութեանց: Իր գլխակարգութիւններն են. երկիրն եւ իր բնակչութիւնը. Անկախութիւնը նուաճուած. Տիգրան Մեծ. Հայաստանի քաղաքապետութիւնը ընդ մէջ Հոմմի եւ Պարթեւաց. Հայաստան կ'ընդունի քրիստոնէութիւնը. Բրիտանոկոթեան պաշտպանութիւնը. Բագրատունեաց քաղաքապետութիւնը. Հայաստան եւ Բիզանդիոն. Նոր Հայաստանի քաղաքապետութիւնը. Հայաստան տուրանեան տիրապետութեան տակ. Հայկական վերածնութիւնը. Արեւելեան հարցը. Ռուսներն Անդրկովկասի մէջ. Հայկական հարցը. եւ այլն:

Կը պատմէ զէպէրը գրուած առ գրուած, կը ցուցադրէ գործող զէմքերը կարկառուն. կը պատկերացնէ ժողովուրդին տնտեսական, զինուորական, ընկերային եւ մշակութային պայմաններն ու ստեղծագործութիւնները իւրաքանչիւր գրուածքին մէջ. պատմագէտի աչքով կը հետեւի մեծ Պետութիւններու մրցակցութեանց Հայաստանի շուրջը, անոնց պատերազմական շարժումներուն եւ զիւանդակութեան. Հայ ժողովուրդն իր բոյնին մէջ պաշտպանողական դիրքի մէջ է. ան կ'ոգորի իր անկախութեան համար. կ'ընկճի հզորագոյնին հարուածներուն տակ, բայց չի հրազոյնին հարուածներուն տակ, բայց չի հրազոյնին հարուածներուն տակ, անվերջ կուտի մէջ է. կուտի ուր յաղթութիւն եւ պարտութիւն իրար կը յաջորդեն: Ազգեր կու գան, ազգեր կ'երթան. բայց Հայաստանի բարձրանդակին վրայ հայն է որ կը մնայ երկրին ընկի, թէպէտ խոց եւ վերաւոր. ան հաւատարիմ մնացած է իր հողին. ինչ որ կը քանդէ օտարը հոն, ինքը կը ճգնի շինել միւսանգամ. անվերջ կործանում եւ անվերջ վերաշինում: Ահա Պատմութիւնը, զոր գրի կ'անէ փաստմանեան, անչափ ոգեւորութեամբ, հմայիչ ոճով, պատմագէտի հայեցողութեամբ:

Համեստ է հեղինակը. կը խոստովանի համարձակ, թէ Պատմութեան բովանդակութիւնը քաղուածք մըն է հեղինակաւոր պատմագէտներու եւ քննիչներու գործերէն. անունները մատնանշած է իր գրուածքին ծանօթութիւններու մէջ. մեծ է անոնց թիւը: Այս վկայ է, թէ ո'րքան եռանդով նուիրուած

